400

Հ. Ս. Խ. Հ.

ԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

63(47.925):31

# 1922 Թ. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

# ԾՐԱԳԻՐ

# ԵՒ

# ՀՐԱՀԱՆԳ

1922 Թ.

ԵՐԵՎԱՆ

1 ին Խորհր. Պետ. Տպարան

332-И97

493
332

# ԾՐԱԳԻՐ

## Հայաստանի 1922 թ. գիւղատնտեսական ու հողային վիճակագրութեան

1. 1922 թ. գիւղատնտեսական և հողային վի-
ճակագրութիւնը ընդհանուր է, որն ընդգրկում է
Հայաստանի բոլոր մասերը, բացառութեամբ Երևան
և Ալեքպոլ քաղաքների, որոնց ցուցակագրումը կա-
տարվելու է քաղաքային առանձին հարցաթերթերով,
2. Վիճակագրութեան ձևը անակյան է և էքս-
պեդիցիոն, չորս հիմնական հարցաթերթերով.

ա. Տնաթերթ;

բ. Տեխնիկա՝ (դաշտային մշակութեան, այ-
գեգործութեան, անասնապահութեան, պտղաբու-
ծութեան և այլն) և նրանց մշակման կարգն ու
եղանակը.

գ. Գիւղաթերթ.

դ. Ներհողային տնտեսութիւնների թերթ.
Իբրև լրացում լինելու են բնակավայրերի և տնա-
տերերի (տնտեսութիւնների) ցուցակները:

3. Ամբողջ երկիրը բաժանվում է վիճակագրա-
կան 4 շրջանների իրենց ղեկավարներով. I Երևան-
էջմիածին, II Ալեքպոլ-Ղարաքիլիսա-Լոռի, III Իջե-
վան-Նոր-Բայազետ, IV Զանգեզուր - Մեղրի-Դարա-
լագեազ.

աշխատակիցներից ոչ ով իրավունք չունի ինքնակամ բացակայել կամ հեռանալ գործից։

գ. Խորհրդային և կոմունալ տնտեսութիւնների ցուցակագրումը կատարում են հատուկ գիւղատնտեսներ, իսկ նրանց բացակայութեան դեպքում, գավվարիչը կամ վերստուգիչը անձամբ։

---

Օգոստոսի ընթացքում ժողովրդական լայն ագիտացիա կազմակերպելու համար գիւղվիճակագրութեան նշանակութեան մասին տեղական թերթերում զետեղվում են հոդվածներ, հրատարակվում են կոչեր կենտգործկոմի, ժողկոմխորհի, պրոֆմիութեան կողմից, ուղղած ամբողջ ազգաբնակութեան։

Շրջանային 4 ղեկավարները մանդատներ ստանում են ժողկոմխորհից, արտակարգ լիազորութիւններով։

Կառավարական բարձր մարմինները համապատասխան կարգադրութիւններ են անում՝ վիճակագրութեան հաջող կատարմանը աջակցելու նպատակով տեղերում։

Վիճակագրութեան ամբողջ ընթացքում ոչ ոք իրավունք չունի փոխել մեկին վիճակագրական տեղեկութիւններ հաղորդել առանց կենվիճվարի թույլտվութեան։

---

# ՀՐԱՀԱՆԳ

## 1922 թ. գիւղատնտեսական եվ հողային վիճակագրութեան ղեկավարների եվ ցուցակագրողների համար

---

### Վիճակագրութեան ընդհանուր հիմունքներ.

*1. Գիւղատնտեսական և հողային վիճակագրութիւնը կատարվում է 1922 թ. սեպտեմբեր ամսի և հոկտեմբերի առաջին կիսամսեակի ընթացքում, համաձայն Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմխորհի 1922 թ. օգոստոսի դեկրետի:*

*2. Գիւղատնտեսական և հողային վիճակագրութիւնը ընդգրկում է միաժամանակ Հայաստանի ամբողջ հանրապետութեան մէջ գտնվող գիւղացիական և հավաքական տնտեսութիւնները, հաշվի առնելով նրանց ցանքերի տարածութիւնները, անասունները և գիւղատնտեսական ինվենտարը, բացառութեամբ Երևան և Ալեքպոլ քաղաքների, որոնց վիճակագրութիւնը պէտք է կատարվի հատկապես մշակված ծրագրով:*

*3. Վիճակագրութեան կատարման համար ստորև դրված հրահանգը սահմանում է ընդհանուր ցուցմունքները ամբողջ հանրապետութեան համար: Գավվիճբիւրոները և վիճակագրական ինքնուրույն մարմինները, խստիվ առաջնորդվելով այս ընդհանուր հրահանգով,*

կարող են մշակել, վորպես լրացուցիչ, նաև տեղական հրահանգներ, վորոնք անհրաժեշտ կնկատվեն հարցերը ավելի պարզորոշ և տեղական պայմաններին ու առանձնահատկություններին համապատասխան դարձնելու համար։

## Վիճակագրության ընդհանուր կանոններ

4. Վիճակագրության համար ընդունվում են հետևյալ 4 հիմնական հարցաթերթերը. ա) Տնաթերթ, բ) Գյուղական տնտեսության գլխավոր ճյուղերի տեխնիկան ու նրանց մշակման կարգը և եղանակը, գ) Գյուղաթերթ և դ) Խորհրդ. տնտեսության թերթիկ։

5. Հիմնական 4 հարցաթերթերին օժանդակիչ հանդիսանում են՝ ա) բնակավայրերի ցուցակը և բ) տնտեսների (տնտեսությունների) ցուցակը։

6. Տնաթերթ կազմվում է անխտիր ամեն մի տնտեսության համար առանձին, անկախ նրանից, թե տվյալ տնտեսությունը հող, ցանք և անասուն ունի թե վոչ, ապրում է իր սեփական տան մեջ թե վարձով, հաշվի առնելով նաև գյուղատնտեսական կոմունաների և արտելների անդամների ընտանիքները։

7. Տնաթերթ կազմվում է առկա (բնիկ և կողմնակի) և բացակա (բնիկ) տնտեսությունների համար։

Ծանոթ. 1) Բացակա տնտեսությունները նրանք են, վորոնց տերերը և ընտանիքները տվյալ գյուղում կամ համայնքում հող ունեն և օգտվում են, բայց այնտեղ չեն ապրում։

2) Այն տնտեսությունները, վորոնց տերերը թեև գրված են տվյալ գյուղում, բայց խզել են

իրենց կապը հողից, վիճակագրության ժամանակ հաշվի չեն առնվում։

3) Տնտեսության մեջ վորպես վարձու բանվորներ ապրող անձանց համար առանձին տնաթերթ չի կազմվում։ Այլ նրանք մտնում են տնաթերթի բնակիչների բաժնում, իսկ նրանք վորոնք ընտանիքով ապրում են տնտեսության մեջ, բայց ընտանիքի անդամները վոչ մի ծառայության կապ չունեն տնտեսության հետ, նրանց համար կազմվում է առանձին տնաթերթ, համաձայն սույն հրահանգի 3-րդ կետի։ Վերջին դեպքում տնտեսության կապված անձնավորությունը (ծառա, բանվոր և այլն) հաշվի է առնըվում «վարձու բանվորների» բաժնում (152—167)։

8. Վիճակագրությունից առաջ կազմվում է վիճակագրության ենթակա բնակություն ունեցող վայրերի (բնակավայրերի) ու հավաքական (խորհուրդ. կոմունալ, արտելային) տնտեսությունների ցուցակը։ Այդպիսի ցուցակներ կազմվում են ըստ շրջանակի, գավառի և վիճակագր. շրջանի։

9. Վերոհիշյալ ցուցակում նախ նշանակվում են գյուղերը, քոչատեղերը, ամառանոցները և ապա խորհրդային, կոմունալ և արտելային տնտեսությունները, մատնանշելով յուրաքանչյուր բնակավայրի բնույթը և №№-ը նշանակելով ամբողջ ցուցակի համար հերթական կարգով։

Ծանոթ. Եթե գյուղը բաղկացած է երկու կամ ավելի համայնքներից (հողային հասարակություններից) դրանցից յուրաքանչյուրը ցուցակի մեջ մտնում է առանձին №-ով։

7. Տվեալ գիւղի, քոչատեղի կամ հավաքական բնակավայրի հողերի մի մասը ամառային ապրուստի համար հատկացված լինելու դեպքում, այդ առանձնացրած մասերը նույնպես հաշվի են առնվում և առանձին մուծվում են ցուցակում, ծանոթութեան մեջ նշանակելով—«դա ժամանակավոր է»։

10. Վիճակագրութիւնից առաջ իւրաքանչիւր բնակավայրում կազմվում է տնատերերի ցուցակ, որի համաձայն էլ միևնույն անուն ազգանուններով պատրաստվում են տնաթերթիկները, որոնց մեջ նշանակվում են №№ ըստ կարգի, տանտիրոջ անուն ազգանունը, գավառը, գավառամասը, գիւղը։

Ծանօթ. 1. Տնատերերի ցուցակում մտնում են բոլոր ինքնուրույն տնտեսութիւնների տերերը (հոդ. 4 և ծանոթ. 1) առանց ընտանիքների անդամների և սույն հրահանգի 4-րդ կետի 2, 3, 4-րդ ծանոթութիւնների մեջ հիշատակված անձերի։

2. Տնաթերթում կատարված ամեն փոփոխութիւնները պետք է կատարել նաև տնատերերի ցուցակներում։

11. Տնատերերի ցուցակում իւրաքանչիւր անվան դիմաց նշանակվում է նրա ընտանիքի անդամների թիվը, և ծանոթութիւնը՝ (առկա, բացակա—բնիկ, կողմնակի, փախստական)։

## Վիճակագրութեան կատարման եղանակը

12. Ցուցակագրողը գիւղ գալով հրավիրում է գիւղգործկոմի անդամներին և բանիմաց գիւղացիներին և նրանց ներկայութեամբ կազմում է տնատերերի ցուցակը, համաձայն ընդհանուր կանոնների։

Ծանոթ. ա) Ցուցակը կազմվում է ոչ թե այբենական, այլ տների դասավորման կարգով։

բ. Տնատեր պետք է ընդունել տնտեսության պաշտոնական տիրոջը, թեկուզ նրա բացակայությանը ընտանիքի այլ անդամներն են նրա իրավունքները վարում։

13. Տնատերերի ցուցակը բնիկների նկատմամբ պետք է ստուգվի հարկային մատյաններով։

Ծանոթ. Տնատերերի ամբողջ ցուցակը պետք է ստուգի և վավերացնի գյուղգործկոմը համապատասխան ստորագրություններով և կնիքով։

14. Տնատերերի ցուցակը կազմելուց անմիջապես հետո ցուցակագրողն սկսում է լրացնել գյուղաթերթը։

15) Տնաթերթը լրացնելուց առաջ պետք է հրավիրել լայն բազմամարդ ժողովներ գյուղում և մանրամասնորեն, կենտրոնի կողմից տրված թեզերով, բացատրել վիճակագրության նշանակությունը ընդհանրապես և գյուղատնտեսականինը՝ մասնավորապես։

16) Տնատերերի հարցափորձը պետք է կատարել ժողովում. իսկ այն մեծ գյուղերում, ուր ցուցակագրությունը մեկ օրում չի կարելի վերջացնել, պետք է նշանակել հերթ ըստ տնատերերի ցուցակի կարգի։

17. Ցուցակագրելիս հարցերը պետք է տալ ուղղակի, առանց ընդհանուր դարձվածքների. օրինակ՝ չի կարելի հարցնել—«ինչ էք ցանել», ձեր ընտանիքը ինչ կազմ ունի և այլն։ Այլ պետք է հարցերը դնել այսպես՝—«քանի՞ փութ կամ դեսյատին աշնանացան ցորեն էք ցանել, գարի էք ցանել» «հայր ունի՞ս, մայր ունի՞ս» և այլն։

18. Ամեն տեսակի թիւրիմացութիւններ ծագելիս կամ բոլոր կասկածելի դրութիւնները պարզելու համար, որոնք այս հրահանգով չեն նախատեսնված, ցուցակագրողը դիմում է վերստուգիչ հրահանգիչին։

Ծանօթութիւն. Ցուցակագրողը բոլոր նման դեպքերը նշանակում է նաև իր հիշատակարանում և ցուցակագրութիւնը ավարտելուն պես հաղորդում է այն անձանց, որոնք լիազորված կլինեն իրենց աշխատանքն ընդունել։

19. Հարցաթերթը կազմվում է անպայման հայերեն լեզվով, թանաքով կամ քիմիական մատիտով։

20. Հարցաթերթերը պետք է գրել պարզ, մաքուր և ընթեռնելի։

21. Պատասխանները պետք է գրել հարցի համապատասխան սիւնակում միայն, առանց անցնելու կողքի սիւնակները։

22. Սխալ գրված պատասխանը պետք է ջնջել երկու հորիզոնական գծերով (=) և վերևից գրել ուղիղը։

Ծանօթութիւն. Միայն մեկ գծով ջնջված պատասխանը իբրև սխալ չի ընդունվելու։

23. Չի կարելի բաց մնացած տողեր և սիւնակներ թողնել. պատասխան չունեցող սիւնակներում պետք է գիծ (—) դնել. վորպեսզի պարզ լինի, վոր ցուցակագրելիս հարցը մոռացութեան տրված չե եղել։

24. Պետք է անպայման համարագրել բոլոր հարցաթերթերը։ Գիւղաթերթերը, խորհրդային տնտեսութիւնների ցուցակները, տեխնիկայի թերթերը և տնա-

տերերի ցուցակները համարակալվում են ըստ բնակավայրերի ցուցակի №№-ի, իսկ տնաթերթերը՝ ըստ տնատերերի ցուցակի №№-ի։

25. Յուրաքանչյուր տնաթերթ լրացնելուց հետո պետք է կրկին դիտել թերթը, ստուգելու համար թե բոլո՞ր հարցերն են լրացրած, վոչինչ մոռացված չէ՞, լավ ու մաքուր են գրված պատասխանները, թե ոչ։

26. Կեղտոտ և ջնջումներով գրված տնաթերթերը չպետք է վոչնչացնել, այլ արտագրել և արտագրածի հետ միասին հանձնել ում վոր հարկն է։

27. Գյուղի կամ բնակավայրի բոլոր տնաթերթերը կազմելուց հետո, պետք է ստուգել թե բոլո՞ր տնատերերը ցուցակագրված են թե վոչ։

28. Գյուղում ցուցակագրությունը վերջանալուց հետո, անմիջապես ցուցակագրողը նախնական տվյալների թերթիկում մուծում է անհրաժեշտ թվերը և հիշատետրի մեջ նշանակում է իր ծանոթությունները։

29. Վիճակագրական շրջանակում ցուցակագրությունը ամբողջապես ավարտելուց հետո ցուցակագրողը ստուգում է, թե իրեն հանձնված բոլոր բնակավայրերը ցուցակագրված են թե վոչ։

30. Վիճակագրության բոլոր մասնակիցները հիշատետրեր են պահում, վորի մեջ նշանակվում են մարշրուտը, լրացրած հարցաթերթերի քանակը, ցուցակագրության ընթացքում առաջացած ու նկատված բոլոր հարցերն ու կասկած հարուցող դեպքերը, մատնանշելով այն գյուղերի, տնաթերթերի համապատասխան №№-ը, վորոնց նկատմամբ առաջացել են այդ խնդիրները։

31. Հիշատետրի մեջ յուրաքանչյուր օրվա դիտողությունները գրվում են նույն օրվա ընթացքում։

32. Ցուցակագրութեան համար անհրաժեշտ է.

ա) Կատարելապէս իւրացնել մշակված բոլոր ձևերի հարցաթերթերը լրացնելու եղանակը։

բ) Իւրացնել հարցաթերթերի հաշվառման և հարցափորձի տեխնիկան։

գ) Ունենալ ամեն դեպքում կառավարութեան և հասարակական ձեռնարկների, մարմինների, կազմակերպութիւնների և անձանց աջակցութիւնից օգտվելու և ցուցակագրութիւնը կատարելու իրավունքը հաստատող վկայական։

դ) Ունենալ իր շրջանի մեջ գտնվող գիւղերի և առհասարակ բոլոր բնակութեան վայրերի լրիվ ցուցակը։

ե) Ունենալ շրջանի քարտեզի կտրվածքը կամ նրա հատակագիծը, որի վրա նշանակված կլինեն բոլոր տեսակի ճանապարհները և բնակավայրերի հեռավորութիւնները գավառամասի և գավառի կենտրոններից։

զ) Ունենալ անպայման տպագրված հրահանգը։

է) Ունենալ այնքան պատրաստի հարցաթերթեր, որ ցուցակագրութեան ընթացքում պակասութիւն չզգացվի, իսկ այդպիսին զգացվելու դեպքում վաղօրոք տեղեկացնել վերստուգիչ-հրահանգիչին են կամ գավառական վարիչին։

ը) Ունենալ թղթապանակներ հարցաթերթերն ու այլ թղթերը պահելու համար։

թ) Պահել հիշատետր. ի) Գրելու թուղթ. ժ) քիմիական մատիտ և այլ պարագաներ։

Ծանօթ. Վիճակագրութեան ամբողջ

ընթացքում ցուցակագրողը իր ձեռքի տակ պետք է ունենալ նախկին վիճակագրութիւնների նախնական տվյալները՝ իր ստացած տվյալները՝ ստուգելու համար։

## Տնաթերթիկ

33. Տնաթերթը գրվում է ամեն մի տան (ծուխի, տնտեսութեան) համար առանձին-առանձին։ Տուն (ծուխ) կամ առանձին տնտեսութիւն համարվում են նրանք, վորոնք տնտեսութեան ընդհանուր գույք և ընդհանուր եկամուտ (բիւջե) ունեն։

34. Մեկ տան մեջ ապրող, բայց միմիանցից անկախ տնտեսութիւն վարող ընտանիքները առանձին տուն (տնտեսութիւն) են ճանաչվում և նրանց իւրաքանչիւրի համար առանձին տնաթերթ է գրվում։ Եվ ընդհակառակն տարբեր տներում ապրող, բայց մեկ ընդհանուր տնտեսութիւն վարող ընտանիքները ճանաչվում են վորպես մեկ տուն (տնտեսութիւն, ծուխ) և նրանց համար գրվում է մեկ տնաթերթ, բայց եթե դրանք մեկ ընդհանուր եկամուտ (բիւջե) չունեն, այդ դեպքում ճանաչվում են վորպես առանձին ինքնուրույն միավորներ (տուն, տնտեսութիւն) և նրանցից ամեն մեկի համար գրվում է առանձին տնաթերթ։

35. Տնաթերթը կազմված է երկու երեսներից, վորոնցից առաջինը դրսի երեսն է և մեջտեղում նշանակված է գավառը, գավառամասը, գիւղը, տնատիրոջ անուն, ազգանուն, հայրանունը և այլն։

## I. ՏՆԱԹԵՐԹԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ

36. Տնաթերթը պետք է սկսել գրել առաջին երեսից, վորտեղ պետք է նշանակել.

ա) Տնամերձի №-ը ըստ տնատերերի ցուցակի կարգի,

բ) Գավառի, գավառամասի և գիւղի անունները՝ ճշտորեն մատնանշելով բնակավայրի տեսակը (գիւղ, քոչատեղ, ամարանոց և այլն), համաձայն բնակավայրերի ցուցակի։ գ) անուն, հայրանուն և ազգանուն տանտիրոջ կամ այն ձեռնարկութեան կամ հիմնարկութեան անունը, որին պատկանում է տնտեսութիւնը։

2) Պետք է ընդգծել տնտեսութեան տիպը՝ եթե «գիւղացիական» է, և գրել եթե «կոմունայ», «արտել» և այլն տիպի է։

37. «Առկա» կամ «բացակա» բառը ընդգծելով ցույց է տրվում տնտեսութեան այժմեան դրութիւնը։

Ծանոթ. Առկա տնտեսութիւնն (տունը) այն է, որը ցուցակագրութեան ժամանակ գտնվում է տվյալ վայրում։ Առկա է նաև այն տնտեսութիւնը, որի տերը կամ ընտանիքը ժամանակավորապես թեև բացակայում են, բայց հողից բացի ունեն տնային և տնտեսութեան այլ կայքեր (անասուն, ինվենտար և այլն) որը իրենց բացակայութեան ժամանակ պահեն տվել հարևաններին։ Այդպիսի տնտեսութիւնների համար գրվում է լրիվ հացաթերթերը (տնաթերթ), «բայց բնակիչների հաշվառման» բաժնում №№ 23 և 42 սյունակներում նշանակվում է, «բացակա»։

2. «Բացակա» տնտեսութիւն (տունը) այն է, որը թեև տվյալ գիւղի վրա գրված է, բայց վաղուց է, այնտեղ տնտեսութիւն չի տարվում։ Այն տնտեսութիւնները (տները), որոնք վաղուց

իրենց կապը խզել են հողից, բոլորովին հաշվի չպետք է առնել և տնաթերթերում չպետք է մուծել։

37. «Բացակա» տնտեսության համար պետք է գրել միայն «հողի օգտագործման» բաժնի հարցերը—վարձու առնելու—տալու, նրանց ժամանակի ու պայմանների և ցանքերի մասին, եթե կան։

Բնակիչների հաշվառման բաժնում ոչինչ չպետք է գրել, այլ ամբողջ բաժնի վրա մեծ խաչ քաշել և նշանակել «բացակա»։

38. «Բնիկ», «կողմնակի», «փախստական» բառերը ցույց են տալիս տնտեսության դրությունը։

Ծանոթություն. «Բնիկ» նրանք են, վորոնք գրված են տվյալ վայրի վրա և տեղացիներն են համարվում։ Կողմնակի են եկվոր ուսուցիչները, առևտրականները, վարձկալները և այլն, որոնք հարկային մատյանում չեն արձանագրված և գյուղի վրա չեն գրված։

39. Կողմնակիների, նոր վերաբնակվածների և փախստականների նկատմամբ պետք է գրել թե երբ և որտեղից են եկել։

40. Ազգությունը, որքան հնար է, պետք է գրել ուղիղ և լրիվ արտահայտությամբ, նշանակելով և ցեղը օրինակ՝ հայ ուդիայի, եզիդի, քուրդ գիլանցի, պարսիկ, տաճիկ, ռուս մալական, և այլն։

41. Տան գլխավորի և ընտանիքի գլխավոր պարապմունքը, կամ նրանց տնտեսության մեջ արդյունագործական բնույթ կրող [illegible] զբաղմունքի և արհեստի մասին պետք է գրել այն, ինչ որ կըպատասխանեն հարցուփորձի [illegible] իրենց։

Ծանոթ. 1. Եթե տնատերը զինվորական ծառայության մեջ է գտնվում նրա անվան դիմաց «Տանգլխավորի պարապմունքը» հարցի դեմ պետք է գիծ քաշել (—)։

2. Ընտանիքի արդյունագործական բնույթ կրող երկրորդական պարապմունքներն են այն արդյունքները որոնք վաճառքի են հանվում. օրինակ՝ մեղվաբուծություն, գինեգործություն, եգեգործություն, պարտեզպանություն, թռչնապահություն, կաթնատնտեսություն, շերամապահություն և այլն։

42. Առևտրա-արդյունաբերական հաստատություն. բաժ. (տ. 2-դ երես) պետք է ստուգել բոլոր արհեստանոցները, խանութները, արդյունագործական ձեռնարկները նրանց քանակը №279 «թիվ» սյունակում, որոնք վարձու չեն տված և գործում են, օրինակ՝ դարբնոց, հյուսնոց, տակառագործարան, կոշկակարանոց, խանութ, օղեգործարան և այլն) դիմացը նշանակելով ամենագլխավոր գործիքների թիվը (փուքս, փեթակ, ջուլհակի դազգահ, ջրաղացի քարեր և այլն), որոնք միայն գործածության համար պիտանի են։

Ծանոթ. վերոհիշյալ 42-րդ կետով գրված տեղեկությունները պետք է համապատասխան լինեն բնակիչների հաշվառման բաժ. №№ 11-19 և 33-41 սյունակներում գրվածներին, նշանակելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի դերն ու դիրքը բանեցրած (արհեստի, զբաղումի և այլն մեջ.)

## II Բնակիչների հաշվառման բաժին

43. Բոլոր տնտեսություններում գտնվող բնակիչները պետք է ցուցակագրել անհատապես, վորոնց ա-

մեն մեկի համար հատկացված է առանձին հարցմա-կան սիւնակ ըստ սեռի՝ տղամարդկանց №№ 1—22 և կանանց №№ 23—44։

44. Բոլոր տնտեսութիւններում ցուցակագրվում են հետևյալ անձերը.

ա) Տնատերը և նրա ընտանիքի անդամները, որոնք ցուցակագրութեան ժամանակ ապրում են այնտեղ.

բ) Բացակա եղող, այսինքն տնտեսութիւնից դուրս ապրող տնատերերի ընտանիքի անդամները, որոնք սակայն բաժանված չեն և ապրում են մեկ ընդհանուր բիւջեով։

Ծանօթութիւն. Եթե վերջին հանգամանքը բացակայում է, հիշյալ անձինք հաշվի չեն առնվում, իսկ եթե նրանք հող ունեն, դրանց համար գրվում է առանձին տնաթերթ, որպես բացակայի.

գ) Զինվորական ծառայութեան մեջ գտնվողները, որոնք ժամանակավորապես եկել են գիւղ.

դ) Վարձու բանվորները և ծառաները, որոնք ապրում են այս տնտեսութեան մեջ։

Ծանօթութիւն. Այս տեսակի անձինք համարվում են առկա, մնացած բոլորը համարվում են բացակա բնակիչներ։

45. Բնակիչների ցուցակագրումը պետք է սկսել տնատիրոջից կամ ընտանիքի գլխավորից, №№ 2 և 24 սիւնակում նշանակելով հերթական №№-ը և 3 և 25 սիւնակներում դնելով «Տ» տառը, որը նշանակում է տնատեր, ապա ընտանիքի միւս անդամները, իւրաքանչիւրի դիմաց նշանակելով կրճատված ձևով ընտա-

նեկան կապը՝ տղամարդկանց շարքում—«ՏՂ»—տղան, «Ե»—եղբայրը, «Հ»—հայրը, «Թ»—թոռը, «ԵՏ»—եղբոր կամ հորեղբոր տղան, կանանց շարքում՝ «Կ»—կին, «Ա»—աղջիկը, «ՀՍ»—հարսը, «ԵԱ»—եղբոր կամ հորեղբոր աղջիկը, «Ք»—քույրը, «Բ»—բանվոր կամ բանվորուհին «Ծ»—ծառան։ Եթե ծառաների թվում փախստականներ կան, նրանց դիմաց պետք է նշանակել ԾՓ—ծառա-փախստական։

Ծանոթ. Եթե ազգակցական կապը շատ հեռու է՝ գրել «ԱԶԳ» որ նշանակում է ազգական։

46. Ցուցակագրվողի տարիքը պետք է նշանակել №№ 4-8 և 26—30 սյունակներում թվանշանով, հարցնելով թե նրա որ տարին է լրացել և ըստ այնմ գրել համապատասխան խմբի մեջ. օրինակ եթե 7 տարեկանից պակաս է գրել № 4 և 26 սյունակում, եթե 12-ից պակաս է՝ № 5 և 27 ում և այլն։ Մեկ տարեկանից պակաս երեխաների դիմաց գրել «0»։

47. «Աշխատանքի անընդունակ և հոգեկան հիվանդ» 9 և 31 սյունակում նշանակվում երկու աչքից կույր—«2Կ», երկու ականջից խուլ «ԽԼ». կաղ երկու ոտքից «2ԿՂ», կարճատես «ԿԱՐՃ», մեկ ոտից կաղ «ՑԿՂ», ապուշ «ԱՊ», համր «ՀՄ», հաշմանդամ «ՀՇ», համրուխուլ «ՀԽԼ», կուզ «կուզ», երկու ձեռքը կտրած «2Ձ», մեկ ձեռքը կտրած «1Ձ» և այլն։

48. № 10 և 32 սյունակում նշանակվում է հարցաքննվողի ուսումը հետևյալ նշաններով.—անգրագետ (ԱՆ), կիսագրագետ, որը միայն գիտե կարդալ (Կ), I, II, III աստիճաններում սովորող (ս 1, ս 2, ս 3), տարրական անցած (ՏԱՐ), միջնակարգ անցած (ՄԻՋ), բարձրագույն անցած (Բ) և տնային կրթություն ունեցող (ՏՆ)։

49. №№ 11—19, 33—49 սյունակներում պետք է նշանակել ընտանիքի յուրաքանչյուր անդամի արհեստ-պարապմունքը 1914-ին, 1917-ին և ներկայումս (այսինքն 1921 թ. դեկտեմբերից մինչև այժմ)։

50. Արհեստ-պարապմունք ասելով պետք է հասկանալ ամեն տեսակի զբաղմունքները, որ ընտանիքի առանձին անդամները կամ ամբողջ ընտանիքը կատարում են. ինչպիսին են՝ գյուղական աշխատանքները ամեն տեսակի առևտրաարդյունաբեր. զբաղմունքները և ազատ զբաղմունքները, ինչպես նաև գյուղատնտեսական ինտենսիվ ճյուղերը, որոնք արդյունագործական բնույթ ունեն (այգեգործություն, մեղվաբուծություն, պտղաբուծություն, կաթնատնտեսություն և այլն)։

Ծանոթ.—Պրոֆեսիոնալ սովորույթ չպահանջող զբաղմունքները, որոնք ոևէ իրական եկամուտի աղբյուր չեն կազմում, հաշվի չեն առնվում։

51. №№ 11, 14, 17 և 33, 36, 39 սյունակներում նշանակվում են զբաղմունքների անունները 1914, 1917 թվերին և ներկայումս։

52. Զբաղմունքի անունը պետք է արտահայտի արտադրության տեսակը (հողագործություն ձկնորսություն, մանր առևտուր, տնային ջուլհակություն, որսորդություն) կամ արտադրողը (հողագործ, ձկնորս, մանրառևտրական, տնային ջուլհակ, որսորդ և այլն) և կամ պաշտոնը (ուսուցիչ, քահանա, բժիշկ, գործկոմի անդամ և այլն)։ Առ հասարակ պետք է ցույց տալ զբաղմունքը լիովին, խուսափելով ընդհանուր խոսքերից, ինչպես օրինակ չի կարելի գրել՝ խորհրդային ծառայող, արհեստավոր

մասնագետ և այլն։ Եթե միենույն անձը վերջին ժամանակներս միաժամանակ մի քանի զբաղմունք է ունեցել, պետք է ցույց տալ բոլորը։

53) Տնտեսության մեջ վարձու աշխատողների (բատրակ) զբաղմունքը պետք է համապատասխան սյունակում գրել «գղծ» և կամ ցույց տալ ավելի պարզ կերպով նրա կատարած աշխատանքը՝ օրինակ՝ հովիվ, ճերկող, այգեպան, կթող և այլն։

54) №№ 12, 15, 18, 34, 37, 40 սյունակներում գրել պարապմունքի տեղը՝ գավառ և գյուղը Հայաստանի սահմաններում, իսկ եթե Հայաստանից դուրս է, գրել միայն նահանգը։

55) №№ 13, 16, 19 և 35 38, 41 սյունակներում պետք է նշանակել իրավական դրությունը արհեստի նկատմամբ, եթե գործի տերը ինքն է և ուրիշներին էլ աշխատեցնում է, գրել «ձեռ», եթե մենակ ինքն է աշխատում, գրել (ինքը)։ Ընտանիքի անդամները, որոնք մասնակցում են տանտիրոջ աշխատանքի մեջ, համարվում են ընտանեկան կոոպերատորներ, որը պետք է նշանակել «ընկ.» կրճատված ձևով, իսկ ոչ ընտանիքի անդամների համար նշանակել «վրձ» (վարձվոր)։

56) «Մեկ ամսից ավել բացակայողների» սյունակում (20 և 42) պետք է նշանակել «բաց»։

57) Բացակայության պատճառների № 21 և 43 սյունակներում պետք է լրիվ գրել պատճառը՝ օրինակ՝ „վարձու աշխատանք", «կառապան», և այլն։

58) «Զինվորական ծառայության կոչված» № 22 և 44 սյունակում նշանակել կրճատված ձևով «զճ»։

## Բանվորների եվ ծառայողների բաժին (150-167)

59) Այս բաժնում մտնում են միայն այն բանվորներն ու ծառայողները, վորոնց համար կազմվելու է նաև առանձին տոմաթերթ համաձայն սույն Հրահանգի № 3 Հոդվածի։

60) Վարձման պայմանների նկատմամբ «152-167» պատասխանները պետք է գրել՝ վարձու աշխատող տղամարդկանց և կանանց համար համապատասխան պայմանների տակ (տարով, սեզոնով, օրավարձով, հատավարձով)։ Բանվորական հասակ ասելով պետք է ընդունել՝ տղամարդիկը 18—60 և կանայք 16—55 տարեկան։

61) Այս բաժնում գրվում են գիւղատնտեսութեան և արդիւնագործութեան մեջ աշխատող բոլոր վերոհիշեալ ծառայողներն ու բանվորները։

62) Աշխատանքի ձևը (տարով, սեզոնով և այլն) վերաբերում է գիւղատնտեսական այս տարվան (1921 սեպտ.—1922 սեպտ.)։

63) Տնաթերթի առաջին երեսի վրա պետք է նշանակել 1922 թվի յունվարի 1-ից մեռածների և ծնվածների թիվը հասակավոր տղամարդ, կին և մինչև 12 տարեկան երեխաները երկու սեռի առանձին։

Ծանոթ. — Եթե տնաթերթը կազմված է վարձկալի (арендатор) անունով, Տնաթերթի առաջին երեսում պետք է գրել Հողերի իսկական տիրոջ ազգանունը և անունը։

## III Ինվենտարի բաժին 56—110

64. Պետք է գրել գիւղատնտեսական ամբողջ ին-

վենտարը։ Հարցաթերթում չնախատեսված որևէ ինվենտար լինելու պարագային պետք է հարցաթերթից ջնջել այն, որը առհասարակ տվեալ շրջանում գոյություն չունի, ըստ շրջանային կամ գավառական վարիչների ստացած ցուցմունքի, և նրա տեղ գրել ունեցածը։

65. Պետք է ցուցակագրել միանգամայն աշխատանքի համար պիտանի և սարքին ինվենտարը միայն։

66. Եթե ինվենտարը ընկերովի է ձեռք բերված, պետք է ցույց տալ, թե որ մասն է պատկանում տվեալ տնտեսության (1/4, 1/3, 1/2 և այլն)։

67. Փոխադրական միջոցների բաժնում ցուցակագրվում են ամեն տեսակի միջոցները (Ուղևորության և բեռնատար), առանց մասնանշելու սակայն տեսակը։

68. Ամբողջ գյուղին, համայնքին, կոոպերատիվներին, կամ պետության պատկանող ինվենտարը գրվում է գյուղաթերթի մեջ։

## IV. Անասունների բաժին (№111—149)

69. Անասունները ցուցակագրվում են հարցաթերթերում մասնանշված տեսակների և հասակների համաձայն։ Հաշվի են առնվում տնտեսության պատկանող ինչպես ներկա, նույնպես և ուրիշների մոտ արածացնելու և խնամելու համար տրված, անասունները։ Ուրիշներից խնամելու և արածացնելու համար վերցրած անասունները հաշվի չեն առնվում։

70. № 123 և 124 սյունակում գրվում են մատակները, ըստ որում դրանցից բանող համարվում են նրանք, որոնք վերջին առնվազն 6 ամսվա ընթացքում բանել են գյուղական տնտեսության մեջ։

71. Գառ և ուլ (131 և 134) համարվում են 1922 թվին ծնածները միայն։

72. 4 տարեկանից բարձր և մինչև 4 տարեկան քանող և չքանող ձիերը գրվում են №№ 139 և 142 սյունակներում։ «Ընդամենը» 139 և 141 սյունակներում մեջ մտնելու են թե լծու, թե բեռնակիր և թե հեծնելու ձիերը։

73. № 149 սյունակում գրվում է բոլոր տեսակի անասունների ընդհանուր գումարը։

## V. Հողի օգտագործման բաժին
## (247—270)

74. Այս բաժնում հաշվի են առնվում այն բոլոր հողամասերը, վորոնք գտնվում են տանտիրոջ տրամադրության տակ, բացառությամբ վարձու առածը։

75. Հողի օգտագործման տարածությունը գրվում է մինչև 1917 թ. և ներկայումս առանձին-առանձին։

76. Այն բոլոր հողերը, վորոնք մտնում են հողաբաժանման հաշվի մեջ, գրվում են «Տնովի» հորիզոնական սյունակում։

Հողաբաժանման հաշվին չենթարկվող հողերը գրվում են «Համայնական» հորիզոնական սյունակում։

Երկու դեպքումն էլ պետք է հաշվել դեսյատիններով կամ տեղական չափերով, գրելով դեսյատինի տեղ տեղական չափի անունը (248—269) և նշանակել Տնովի-ի բաժնում հողերի կտորների թիվը, իսկ Համայնական-ի բաժնում հողաբաժինների թիվը։ Հաշիվը տեղական չափերով գրելիս այդ չափը պետք է վերածել դեսյատինի և գրել 277 և 278 հարցերում։

Ծանոթ. Համայնական օգտագործման ձևն

ու բնույթը (օրինակ կոմունալ, արտելային և այն) պետք է կցել «համայնական» խումբին։

77. Այն գյուղերում, ուր 1922 թվին հողաբաժանումը կատարվել է, անմթերթիկների «Հողի օգտագործման» վերնագրում պետք է ավելացնել՝ «ըստ 1922 թվի հողաբաժանման»։

78. № 269 և 270 «բոլորը» սյունակում պետք է մտցնել անտեսության բոլոր հողերը, դրանց հաշվում նաև վարձու տվածները, իսկ վարձու առած հողերը հաշվի չեն առնվում։

Ծանոթ. № 269—271 հարցերում հաշվի են առնվում նաև վարձու հողերը։

79. Հողամասերի (угодья) մեջ մտնում են՝ անտառից ջրովի և անջրդի վարելահողերը, խոտհարքի բաժինները, այգիներն ու պարտեզները, անպետք հողերը և միասները, որոնք առանձնակում չեն նշանակված։

80. Հողերը ցուցակագրվում են համաձայն իրաքանչիւրի հետ հիմնական հողամասի (угодья) մշտական գործադրության նպատակի և ոչ թե պատահականորեն այս տարի այս կամ այն պետքին գործադրված լինելուն։ Եթե ու և հիմնական հողամաս (угодья) միաժամանակ մի քանի պետքերի է հատկացված, պետք է գրել այն, որը ամենից ավելի օգուտ է տալիս և ամենից ավելի տնտեսական արժեք ունի։

81. Տնտեսեղ անելով պետք է հաշվառել շինությունների, և տան կից փոքր բանջարանոցների համար յատկացված հողամասերը (усодебныя земли)։ Տանտեղի սահմանում. Միացնել բոլոր մշակվող հողերը պետք է գրել հողերի համապատասխան սյունակներում «տընատեղի հողերից վերցրած» գծի վրա, որպես դի տը-

նատեղի համար հատկացված, բայց այլ նպատակի գործադրվող հողը տարբերվի տնատեղից դուրս նույն նպատակին հատկացուած հողամասերից (угодья)։

82. Վարելահողերը նրանք են, որտեղ մշակվում են տարեկան զանազան բույսեր, ինչպես նաև տարեկան կամ բազմամեա ցանովի խոտ, դրանց թվում նաև հանգստացող հողերը (հարոս, խոպան, հերկոտ)։

83. ա) Համայնական հողերի մեջ մտնում են բոլոր նրանք, որոնք բաժանման չեն ենթարկվում։ բ) Տնովի օգտագործման հողերը նրանք են, որ մտնում են հողաբաժանման հաշվի մեջ։

84. № 272—276 սիւնեակներում պետք է նշանակել տնտեսութեան տվեալ գիւղից կամ բնակավայրից դուրս գտնվող հողերը։

## V. Վարձովի հողերի բաժին (45—55)

85. Հողերը վարձու տալը կամ վարձու վերցնելը (վարձույթ) լինում է ոչ միայն անհատական, այլև հավաքական կամ համայնական։ Վերջին դեպքում պետք է նշանակել հողի այն մասը, որը ընկնում է իւրաքանչիւր տնտեսութեան վրա։

86. Համայնական-անբաժանելի վարձու տված հողամասերը (օրինակ՝ նախրատափ, արոտատեղ) գրըվում են գիւղաթերթում, որտեղից նիւթը մշակելուց հետո փոխանցվում է տնաթերթի մեջ։

87. Վարձույթների համար պետք է ցույց տալ տարածութիւնը դեսեատիններով կամ տեղական չափերով, փթերով (այսինքն ցանած սերմի հաշվով), ժամանակը (քանի տարով վարձու տրված կամ վերցված է) և ամեն տեսակի պայմանները։

# VI Ցանքերի բաժին *(168—220)*

## ա. Դաշտերում

88. Դաշտային ցանքերի բաժնում գրվում է տնտեսության ցանքի ամբողջ տարածությունը, հաշվի առնելով նաև չցանված վարելահողը։

Ծանոթություն. Վարելահողերի հաշվում չպետք է մտցնել վարձու տված, այսինքն փաստորեն 1922 թվին ցուցակագրվողի տրամադրության տակ չգտնվող հողերը։

89. Ցանքերի բաժնում աշնանացանը պետք է հաշվել 1921 թվի աշնանացանը, իսկ գարնանացանը 22 թվի կատարածը։

90. Դաշտային մշակության մեջ մտնում են ամեն տեսակի հացաբույսերը և այն բոլոր բույսերը, որ տվյալ գյուղում ցանում են արտերում։

91. Բոլոր բարձր կուլտուրայի բույսերը (բամբակ, չալթուկ, ծխախոտ) հաշվի են առնվում անկախ ցանքի չափից և տվյալ տնտեսության ու վայրի համար ունեցած նշանակությունից։

92. Եթե երկու կամ ավելի բույսեր են ցանված միևնույն հողամասում այդ դեպքում պետք է գրել այն, որը տնտեսական ավելի մեծ նշանակություն ունի։

Ծանոթ. Ցանկալի է հարցաթերթում բոլոր բույսերը, որոնք առհասարակ տվյալ վայրում կամ գյուղում չեն մշակվում, նախորոք ջնջել շրջանային կամ գավառական վարիչի ցուցմունքով։

93. Ցանքերը պետք է նշանակել դեսյատիններով, ինչպես նաև փթերով, սերմի չափով։ Իսկ եթե հողերի հաշիվը տվյալ գյուղում կատարվում է տեղական չա-

փերով, պետք է ջնջել «դեսեատին» բառը և նրա տեղ դնել տեղական այդ չափի անունը։

94. Բոլոր բոյսերը ցուցակագրելուց հետո գըծվում է բոլոր ցանքերի ընդհանուր քանակը (212 սիւնեակում)։

№ 213 Սիւնեակում գրվում է չհնձվող հարոս և հերկոտը։ № 214 սիւնեակում գրվում է Հնձվող հարոսը և հերկոտը։ № 215 սիւնեակում գրվում է խոպան հողերի տարածութիւնը։ №216 սիւնեակում վարելահողերի ընդհանուր տարածութիւնը։ № 217, 218 և 219, 220 սիւնեակներում գրվում է 1921 թվի աշնանավարի և 1922 թվի գարնանավարի չցանված տարածութիւնը։

95. Հերկոտ (пар) կոչվում և գրվում է այն արտը, որ մեկ տարով թողնված է առանց ցանելու հանգստանալու համար և այն արտը, վորը հերկվում է հաջորդ տարին ցանելու համար, անկախ այն բանից, թե վերջինս քանի տարի ցանված չէ եղել (черный пар) ինչպես նաև պայմանական կերպով նշանակվում է վարելահողի այն մասը, որ մեկ տարուց ավելի պատահականորեն մնացել է առանց ցանելու։

96. Հարոս (перелог, залеж) կոչվում է և գրվում է այն արտը, որը մեկ տարուց ավելի թողնված է եղել առանց ցանելու հանգստութեան համար, եթե միայն այդ արտը մտնում է կանոնավոր ցանքափոխութեան և հանգստի ցանքի մեջ։

97. Կանոնավոր ցանքափոխութեան մեջ չմտած վարելահողը համարվում է խոպան և գրվում է № 215 սիւնեակում։

98. Ընդհանուր հարոսներից պետք է առանձնացնել այն հարոսները, վորտեղ հանգստի ժամանակ

*խոտ են հնձում (№ 214), վորը մտնում ե ցանքափոխության մեջ։ Ցանքափոխության սխեմից արդեն դուրս եկած հարոսները, վորոնք հնձվում են, պետք ե ցուցակագրել վորպես խոտհարք (№№ 254, 255)։*

*99. Այն արտերը, վորոնք չեն ցանված սերմի, անասունների, բանվորական ձեռների, ինվենտարի պակասության պատճառներով, համարվում են չցանված և պետք ե գրվեն №№ 217, 218; 219 և 220 սյունակներում։*

*100. № 216 «վարելահողերի գումարը դեսյատիններով կամ տեղական չափերով» սյունակում պետք ե հաշվել բոլոր վարելահողերը, հաշվելով նաև վարձու վերցրածը տվեալ գիւղում, բացառությամբ վարձու տված վարելահողերից։*

բ. Ցանքերը տնատեղի հողերում *(221—235)։*

*101. Այս բաժնում պետք ե գրել բոլոր ցանքերը, վոր արված են տնատեղի հատկացված հողերում (այգում, պարտեզում, բանջարանոցում և այլն)։*

*102. Ցանքերը պետք ե հաշվել դեսյատիններով կամ սաժեններով. եթե ցանքը աննշան ե՝ հաշվել տեղական չափերով կամ հատով, արմատներով։*

*103. Բույսերի ցանկը սպառված չե. դրանում չնախատեսված, բայց տվեալ տնտեսության մեջ մշակվող բույսը պետք ե գրել այդ շրջանում չմշակվող բույսի սյունակում, համաձայն շրջանային կամ գավառական վարիչի ցուցմունքի։*

## VII. Այգիների եվ պարտեզների բաժին (236—245]

*104. Պետք ե գրել տվեալ տնտեսության մեջ*

գտնվող բոլոր տեսակի ու ցեղի տունկերը, նշանակելով այգու կամ պարտեզի տարածությունը դեսեատիններով և յուրաքանչյուր տեսակի արմատների թիվը։

165. № 246 սիւնեակներում նշանակված է այգիների և պարտեզների ընդհանուր տարածությունը և բոլոր տեսակի ծառերի և վազերի ընդհանուր թիվը։

---

# ԲԱՌԱՐԱՆ

## ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՌԵՐԻ ԵՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ

| | |
|---|---|
| *Առկա* | Наличный, налицо (для хозяйства) |
| *Ազգանուն, անուն, հայրանուն* | Фамилия, имя, отчество |
| *Ազգութիւն* | Национальность |
| *Արական* | Мужской пол |
| *Առեւտրա-արդիւնագործական ձեռնարկ, հաստատութիւն* | Торгово-промышленное заведение |
| *Արդիւնագործութիւն* | Промышленность обрабатывающая |
| *Արդիւնաբերութիւն* | Промышленность дабывающая |
| *Արհեստ (գործ, աշխատանք)* | Промысел |
| *Արհեստ (պրոֆեսիա)* | Профессия |
| *Արհեստ, մասնագիտութիւն պարապմունք մինչև 1914 թ., մինչև 1917 թ., ներկայումս* | Название профессии занятий, или промысла до 1914 г., до 1917 год. и в настоящее время |
| *Արհեստանոց* | Мастерская |
| *Արհեստ բանեցնելու, պա-* | Место, где ззнимаются |

| | |
|---|---|
| բաղմունքի, աշխատանքի տեղը | профессией и промыслом. |
| Աշխատանքի անընդունակ-(ութիւն) | Нетрудоспособ-ный (ность) |
| Ամսաթիւ | Число |
| Աշխատանքի փոխարէն (վարձու պայման) | За работу |
| Անմշակ հող | Некультированная земля |
| Անջրդի | Неполивные |
| Այգի (խաղողի) | Сад |
| Անտառ | Лес |
| Արդիւնք | Добыча |
| Արդիւնաբերում | Добывание |
| Արեւածաղկի իւղ | Подсолночное масло |
| Առեւտրական, արդիւնաբերական տուրք | Промысловый налог |
| Անուն և թիվ | Наименование и число |
| Այծ | Коза и козел |
| Անասուն | Скот |
| Անասնապահութիւն | Скотоводство |
| Արջառ | Бычки от 1½—3 л. |
| Աղբ (բակերի, փողոցների) | Сор (со дворов, с улиц) |
| Աղբ | Навоз |
| Արօր (չութ, վեցկի) | Соха |
| Արօր բազմախոփանի | Букера |
| Անիվային | Колесная (дорога) |
| Անանցանելի | Непроходима, непроезжая |
| Ամբարտակ | Бассейн |
| Արօտատեղ | Пастбище |

| | |
|---|---|
| Բացակայության պատճառ | Причина отсутствия |
| Բացակա (անտեսություն) | Отсутствующее |
| Բացակա ամսից ավելի | Отсутствующий более 1 месяца |
| Բնիկ (տեղացի) | Коренной-прописной |
| Բնույթ | Характер |
| Բանվոր | Рабочий |
| Բանող (անասուն) | Рабочий (скот) |
| Բանդ » | Плотина |
| Բնակիչներ, բնակչություն, ազգաբնակություն | Население |
| Բահ | Лопата железная |
| Բրիչ (քլունկ) | Кирка |
| Բոլորը | Итого (итого голов всего) |
| Բանվորական հասակ | Рабочий возраст |
| Բրինձ | Рис |
| Բանջարանոց | Огород |
| Բանջարաբուծություն | Огородничество |
| Բոստան | Бостан |
| Բանջար | Овощь |
| Բույս | Растение |
| Բողկ | Редка |
| Բամբակ | Хлопок |
| Բամբակագործություն | Хлопководство |
| Բեհիր (տունկի) | Садиковый кол. |
| Բնակարան | Квартира |
| Բնակավայր | Населенное место, пункт. |
| Գյուղատնտեսական և հողային վիճակագրություն | Сельскохозяйственная и поземельная перепись |

| | |
|---|---|
| Գաղթական | Переселенец |
| Գավառ | Уезд |
| Գավառամաս | Участок |
| Գյուղացիակ. տնտեսություն | Крестьянское хозяйство |
| Գինեգործություն | Виноделие |
| Գինեգործական ինվենտար | Винодельческий инвентарь |
| Գրաստ | Вьючный |
| Գոմեշ | Буйвол |
| Գառներ | Ягнята |
| Գումար | Итого, сумма |
| Գյուղատեղ | Усадебная земля |
| Գերչակ | Клещевина |
| Գյուղ | Село, селение, деревня |
| Գերանդի | Коса |
| Գյուղաթերթ | Поселенный бланк |
| Գործատեր, ձեռնարկու | Хозяин, предприниматель |
| Գործակից | Соучастник, кооператор |
| Գութան մեկ խոփանի | Плуг однолемешн. |
| » երկխոփանի | » двухлемешн. |
| » բազմախոփանի | « многолемешн. |
| » փայտե տեղական | Плуг местный |
| » երկաթե | „ железный |
| | |
| Դարակ | Этажерка |
| Դեսյատին | Десятина |
| Դույլ | Ведро |
| Դանակ պատվաստի | Прививочный нож |
| | |
| Եզան (սայլ) | Воловья (телега) |
| Եղան | Вила |

| | |
|---|---|
| Երկանիվ (սայլ, կառք) | 2-х колесный |
| Երկաթանիվ | На железном ходу |
| Երկանք | Жернова, ручная мельница |
| Եղջիւրավոր անասուն (մանր, խոշոր) | Рогатый скот (крупный, мелкий) |
| Երինջ | Нетель |
| Եւ այլն | и прочие |
| Եռման տակառ | Бродильный чан |
| Երկձի (կառք, ֆայտոն) | 2-х конный (экипаж) |
| Քառաձի | 4-х конный (экипаж) |
| Եկվոր (կողմնակի) | Пришлый (посторонний) |
| Զանազան | Разные |
| Զետեղարան | Помещение |
| Զինվորական ծառայութեան կանչված | Взятый по набору или мобилизации |
| Ընդհանուր գումար | Общий итог, общая сумма |
| Ընդամենը վարելահող | Всего пашни |
| Ընդամենը | Всего |
| Ընկույզ | Орехи |
| Ընտանիք | Семейство |
| Ընտանեկան դրութիւն | Семейное положение |
| Ընտանիքի անդամ | Член семьи |
| Ընդամենը ցանված | Всего посеяно |
| Ընդամենը ցանքի տակ | Всего под посевом |
| Ընտրիչ | Сортировка |
| Թիվ | Число |
| Թվական | Год |
| Թոխր | Кирка-мотыга |
| Թորիչ | Фильтр |

| | |
|---|---|
| Թավալուկ | Каток |
| Ժամանակ | Время |
| Ժամանակավոր | Временный |
| Ժամանակամիջոց | Срок |
| Ինվենտար | Инвентарь |
| Իրավական դրություն (արհեստի, գործի մեջ) | Положение в промысле |
| Իգական | Женский пол |
| Լուծարք | Ликвидация |
| Լուծարել | Ликвидировать |
| Լարան | Шпагат |
| Լքեալ | Заброшенный |
| Խճուղի | Шоссе |
| Խոյ | Волух |
| Խողովակ | Резиновая рукава |
| Խաղողի մամուլ | Виноградный пресс |
| » ճմլան | » дробилка |
| » մզիչ | Давилня |
| Խնոցի | Маслобойка |
| Խառն ինվենտար | Смешанный инвентарь |
| Խոճկոր կոճի | Подсвинка от 4 м. до 1 г. |
| Խոճկորակ | Поросята |
| Խոպան (կամ) հող | Пустующая пашня |
| Խոտ տարեկան | Трава однолетняя |
| Խոտ բազմամյա | Травы многолетние |
| Խոտհարք | Сенокос |

| | |
|---|---|
| Խոտհարոց | Сенокосилка |
| Խոփ | Лемех |
| | |
| Ծորակ | Кран |
| Ծխախոտ | Табак |
| Ծխախոտամշակում | Табаководство |
| Ծագում | Происхождение |
| Ծավալ | Об'ем |
| | |
| Կորեկ | Просо |
| Կորեկի կորկոտ | Пшено |
| Կայուն գներ | Твердые цены |
| Կացարան | Жилое помещение |
| Կանեփ | Конопля |
| Կտավատ վուշ | Леня |
| Կալսիչ | Молотилка |
| Կերտվածք, բանվածք | Изделие |
| Կարաս | Карасы |
| Կալսելուն | В молотьбе |
| Կոմունա | Коммуна |
| | |
| Հպատակություն | Подданство |
| Հողաբաժին | Надел |
| Հողի տարածություն | Площадь земли |
| Հողի բարելավում | Мелиорация |
| Հողի պարարտացում | Удобрение земли |
| Հող մշակելու գործիք | Орудия обработки земли |
| Հարթավայր | Низменность |
| Հեռավորություն | Разстояние |
| Հյուսվածք | Плетенка |

| | |
|---|---|
| Հատիկ մաքրիչ | Зерноочистители |
| Հողերի ընդհանուր տարածությունը դեսյատիններով կամ տեղական չափերով | Количество всей земли в десятинах или в местных мерах |
| Հողաբաժանական | Надельные |
| Հնձող մեքենա | Жатки |
| Հաճար | Полба |
| Հորաս | Залеж, перелог |
| Հերկոտ | Пар, черный пар |
| Հասակ (բանվորական) | Возраст (рабочий) |
| Հորթ | Телята до 1 года |
| Համայնական | Общинное |
| Համայնական օգտագործում հողի | Общинное землепользование |
| Համայնք, հասարակություն | Община—общество |
| Հավաքելուն | В уборке |
| Հնձելուն | В косьбе |
| Հողի օգտագործում | Землепользование |
| Հողի օգտագործման եղանակ | Форма землепользования |
| Հատիկ ջարդիչ | Зернодробилка |
| Հասարակ | Простые |
| Հավասարեցուցիչ տուրք | Уравнительный сбор |
| Հետիոտն | Пешеходная |
| Հոր (ջրհոր) | Колодец |
| Ձագար | Воронка |
| Ձագ (գոմշի) | Буйволенок |

| | |
|---|---|
| Ճակընդեղ | Бураки, свекла |
| ճոթեղեն | Мануфактура |
| Մասնակցութիւն գիւղա-տնտեսական աշխատանք-ներին | Угасшие в сельхоз. работах |
| Միավոր | Единица |
| Մարգոց | Большая лопата для грядок |
| Մոզի—որձ (1—2 տարեկան հորթ) | Подтелок от 1—2 л. |
| Մկրատ | Ножницы |
| Մաքի | Овца |
| Մարկեղ | Пропашники |
| Մղան | Насос |
| Մանկեռ (երկաթե, փայտե) | Бороны железн. (деревян.) |
| Մեղվաբուծութիւն | Пчеловодство |
| Մեղրազատ | Центрофуги |
| Մացառուտ | Кустарники |
| Մոխիր | Зола |
| Մատակ (գոմշի) | Буйволица |
| Մշակույթ | Культура |
| Մշակութիւն | Обработка |
| Միաձի կառք, սայլ | Одноконная |
| Նախրատափ | Выгоны |
| Նախրագնա (ճամբա) | Прогоны |
| Նոխազ | Козлы взрослые |
| Նստակեաց | Оседлый |

| | |
|---|---|
| Շարժիչ | Двигатель, мотор |
| Շարժիչի տեսակ | Род двигателя |
| Շինություն | Здание, строение |
| Շինվածք | Постройка |
| Շրջանառություն, շրջառու-թյուն | Оборот |
| Շաղգամ | Репа |
| Շոգեշարժ | Паровой двигатель |
| Շերամապահություն | Шелководство |
| Պատենտ | Патент |
| Պաշտոն | Должность |
| Վարելուն | В пахате |
| Վոսպ | Чечевица |
| Վոչխար | Бараны взрослые |
| Վարելահող | Пашня |
| Վարձու | Наемный |
| Վարձու առած (հող) | Аренда (арендов. земля) |
| Վարձու տված (հող) | Сдача, (сданная в аренду) |
| Վարձույթ | Аренда и сдача |
| Վիճակագրություն, ցուցա-կագրում | Перепись |
| Ջարջառ | Джарджар |
| Ջորի | Мулы |
| Ջրովի․ (անջրդի) | Поливные (неполивные) |
| Ջրարբի | Поливные—заливные |
| Ջրանցք | Канал |

| | |
|---|---|
| Ջրմուղ | Водопровод |
| Ջրաբաշխություն | Водопользование |
| Ջրամբար | Водоемный колодец |
| | |
| Ռումպ | Румбы |
| | |
| Սերզատ | Сепаратор |
| Սեխ | Дыня |
| Սեփական | Собственный, свой |
| | |
| Վիճակագրող, ցուցակագրող | Регистратор, счетчик |
| Վերստուգիչ, վերահսկիչ—հրահանգիչ | Контролер—инструктор |
| Վայր | Место |
| Վարձվոր | Наемный (рабочий) |
| Ոռոգում | Орошение |
| | |
| Չցանված | Недосев |
| Չորացում | Сушка |
| Պտղաբուծություն | Плодоводство |
| Պարտեզ | Плодовые сады |
| Պարտիզպան (այգեպան) | Садовник |
| Պարապմունք, զբաղմունք | Занятие, промысел |
| Պարարտացում | Удобрение |
| Պամիդոր | Помидор |
| Պոբինջան սև—(սմբուկ) | Дымянка |
| | |
| Տնովի (ծխովի) | Подворно, подворный |
| Տնատեղ | Усадебная земля |
| Տնտեսություն | Хозяйство |

| | |
|---|---|
| Տակառ | Бочка |
| Տակառ եռման | Бродильн. чаны |
| Տաքդեղ | Перец |
| Տոկոսային հարաբերություն | Процентное отношенье |
| Տունկ | Разсадка |
| Տունկերի արմատների թիվը | Число корней |
| Տնաթերթ | Подворная карточка |
| Տաշտ | Лахань |
| Տիկ | Бурдюк |
| Տարեկան (աշորա, չավդար) | Рожь |
| Տիրող, տիրական | Владелец |
| Ցանքափոխություն | Севообарот |
| Ցուցակագրություն | Перепись, регистрация |
| Ցուցակ } Ցանկ } | Список |
| Ցամաքեցում | Осушение |
| Ցուլ | Бугай |
| Փախստական | Беженец |
| Փեթակ | Улей |
| Փեթակ հասարակ | Простой улей |
| » շրջանակով | Рамочныи улей |
| Փոցխ | Грабли ручныя |
| Փոխադրական միջոց | Транспорт, перевозочное средства |
| Փայտանիվ | На деревянном ходу |
| Քոչատեղ | Кочевье |

| | |
|---|---|
| Քուսպ | Жмыха |
| Քաղհանիչ | Мотыга |
| Քուռակ (ձի) մինչև 1 տ. | Жеребец, жеребенок до 1 г. |
| Քնջութ | Кунжут |
| Քառանիվ (սայլ կառք) | 4-х колесные |
| Քանակ | Количество |
| Քամող մեքենա | Веялки |
| | |
| Ուլ | Козленок, козлята |
| Ուղտ | Верблюды |
| | |
| Փակում | Закрытие |
| Ֆիզիկական պակասություն և հիվանդություններ | Физические недостатки и болезни |

Հ. Ս. Խ. Հ.
ԱՐԽԻՎ

Р. В. Ц. 22-го авг. № 27 1-я Сов. типограф.

ՀՀ Ազգային գրադարան
NL0835559

Ц - 400
Ц 93
332